ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2858-Ա « 04 » հունիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ Հ. 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՐՊԱԿԸ, ԾԱԾԿԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ (ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Իսահակյան փողոց հ. 7 հասցեում գտնվող Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կառուցված շինությունները՝ մետաղական կրպակը և ինքնակամ ծածկերը ապամոնտաժելու մասին:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 07.05.2026թ. հ.579-Ա որոշումը և հաշվի առնելով տվյալ հատվածում նախատեսվող բարեկարգման ծրագրերը անհրաժեշտ է ապամոնտաժել Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կառուցված շինությունները՝ մետաղական կրպակը և ինքնակամ ծածկերը:

ՈՐՈՇԵՑԻ

1. Հանձնարարել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ քանդել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Իսահակյան փողոց հ. 7 հասցեում գտնվող Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կառուցված շինությունները՝ մետաղական կրպակ և ինքնակամ ծածկերը ապամոնտաժել:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետին համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

3.Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխա-նատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և

հողի վերահսկողության վարչության, հասարակական կարգի պահպանության ծառայության պետերի և Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246